

## ՄԱՏԵՆԱՐԻՕՍԱԿԱՆ

1. Ցնական դաստիարակութիւն։ Մալբերու ու զղուած խօսքն, անգլիերենից թարգ. Պ. Արեհսանեան, աշակերտ կրթարան-որբանոցին։ 1903 թ. Նիկուլիս. տպարան Ազգ. կրթարան-որբանոցի։ Գիւր մէկ ըէնի (տասը սանտիմ)։ 2. Ազգային Կրթարան-որբանոց ի Կիպրոս։ Տեղեկագիր Զ. տարեցրչանի. (1902 մարտ 1.-1903 փետր. 28), 3. Կիպրոս կղզի։ Գրեց Բակուրան։

Այս երեք փորբիկ զբայկներն էլ հրատարակուած են Կիպրոսի Նիկոսիա հայաբնակ քաղաքում և կարող են հարցառէր ընթերցողին ծանօթացնել թէ այդ կղզու անցեալ և ներս կային հետ, թէ հայ զաղթականութեան հետ։ Մասնաւորապէս այստեղից մենք կարող ենք զաղափար կազմել և այն Կրթարան-որբանոցի մասին, որի օգտին եղել են, թէպէտ և չնչին, ժողովարութիւններ։ Տեղեկադրից, օրինակ, տեսնում ենք որ որբանոցի խնամակաները մեծ աշխատանք են թափում աշխարհիս բոլոր վայրերից, ուր որ հայեր կան, փող հաւաքել յօդուած սյդ համակրելի հաստատութեան, որը ապագայում կարող է լիկէօնի փոխուեկրով մեծամեծ օգուտներ տալ մերձակայ Կիլիկիային։ Գրքոյներից մէկի մէջ զիսեղուած «ազդ»-ից տեսնում ենք, որ որբանոցին կից կազմուած է «Մեսրոպեան» անունով մի ընկերութիւն, որի նպատակն է «համեստ սահմանի մէջ ծառայել ազգի զարգացման»։ Այս կարճ և համեստ նախադասութեան տակ, սակայն, թաղնուած են լայն ծրագիր և մեծ յոյսեր։ Ցանկանք ուրեմն, որ Նիկոսիայի (Կիպրոսի) կրթարան-որբանոցը խսկապէս դառնայ մի լուսատու փարոս այն բոլոր ծովագի համար, որ խարխափում է մտաւոր և տնտեսական առող վիճակի մէջ։